«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

Հայոց եկեղեցին Հայրենական մեծ պատերազմի և հետպատերազմյան տարիներին՝ մինչև Ի. Ստալինի մահը

ԱՌԱՐԿԱ

Պատմություն

ՀԵՂԻՆԱԿ

Մելանյա Դերենիկի Գրիգորյան

ՄԱՐԶ

Արագածոտնի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Հնաբերդի Ե. Պետրոսյանի անվան միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՄԻՆՉԵՎ Ի. ՍՏԱԼԻՆԻ ՄԱՀԸ. ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ 5

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ 5

ԳԼՈՒԽ 2. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԳԵՎՈՐԳ Զ ՉՈՐԵՔՉՅԱՆ 10

ԳԼՈՒԽ 3. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՆՈՐ ԱՔՍՈՐԸ 15

ԳԼՈՒԽ 4. ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 19

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: 20-րդ դարի I-ին քառորդում խորհրդային կարգերի հաստատումով հազարամյա ուղի անցած հայոց եկեղեցին թևակոխում է գոյապայքարի նոր շրջան: Եթե անկախ Հայաստանում Հայոց եեղեցին բարձր հեղինակություն ուներ, ապա այժմ վտանգված էր նաև Մայր Աթոռի գոյությունը: Հայրենական մեծ պատերազմի տարիներին մի կողմ թողնելով խորհրդային վարչակարգից կրած տառապանքները և վեր դասելով ազգային շահը, Հայոց եկեղեցին բարոյական և նյութական մեծ աջակցություն է ցուցաբերում Խորհրդային Հայաստանին: Հայկական պատմագրությունում հանգամանալից ուսումնասիրված չեն Ստալինյան բռնապետության ժամանակաշրջանը և դա պայմանավորված է նրանով, որ խորհրդային վարչակարգերը տարիներ շարունակ անհասանելի էին պահում արխիվային նյութերը և անկողմնակալ հետազոտություն իրականացնելը բավականին դժվար և լուրջ խնդիր էր: Հայաստանում վերոնշյալ ժամանակաշրջանի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարելու հնարավորություն ընձեռվեց 1990-ական թթ. սկզբներից, երբ բացվեց ՀՀ ԱԱՆ արխիվը, որտեղ պահվող փաստաթղթերը բնօրինակները չէին, չէր բացառվումն նաև փաստաթղթային կեղծումները: Թեմայի արդիականությունը, ինչպես նաև գործնական նշանակություն ու կարևորությունը պայմանավորվում է թեմայի ընդգրկած ժամանակաշրջանի վերաբերյալ հիմնախնդրային հարցերի հետազոտմամբ:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Հետազոտությունն ունի գիտական, քաղաքական, ճանաչողական, աժմեական նշանակություն: Պահպանված արխիվային փաստաթղթերը, մամուլային հրապարակումներն ու ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս հիշյալ ժամանակաշրջանի վերաբերյալ հետազոտական, ինչու ոչ նաև գիտական ուսումնասիրություններ կատարելու: Պատմությունը սիրում է կրկնվել և որպեսզի զերծ մնանք անցյալի սխալներից, **նպատակն է** սահմանվել օբյեկտիվորեն հետազոտել թեման և վերլուծաբար մոտենալ խնդրին: Պատմահամեմատական վերլուծություն կատարել, համեմատել և հասկանալ եկեղեցի-պետություն հարաբերությունների կարգավիճակը: Հետազոտության **խնդիրն է** կատարել օբեկտիվ և անկողմնակալ վերլուծություններ: Չնայած նրան, որ թեման համեմատաբար քիչ է ներառված դասագրքերում և այդ բացը լրացնելու ծանրությունը թողնված է դասավանդողի ուսերին, այնուամենայնիվ հարկ է ամբողջությամբ լուսաբանել բռնատիրական

համակարգի դրսևորման պայմաններում Հայոց եկեղեցու գոյապայքարի նշանակությունն ու ազդեցությունը: **Հետազոտության ընթացքում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները. 1.** *Վերլուծության ենթարկել ստալինյան բռնատիրական համակարգի դրսևորումների արդյունքում Հայոց եկեղեցու դրությունը ներկայացնող մանրամասները:* **2.***Հետազոտել Հայոց եկեղեցու նկատմամբ կատարված քաղաքական բռնաճնշումների նախադրյալները:* **3.** *Հասկանալ պետություն-եկեղեցի հարաբերությունները հիշյալ ժամանակաշրջանում:* **4.***Անդրադառնալ ժամանակաշրջանի հոգևոր առաջնորդների գործունեությանն ու ճակատագրին:* **5.***Օբյեկտիվ գնահատական տալ պատմական դեպքերին և դեմքերին:*

Հետազոտության մեթոդաբանությունը: Հետազոտությունը կատարվել է պատմական-շարադրական՝ որն իրենից ներկայացնում է երևույթների և իրադարձությունների վերարտադրում, դրանց ընթացքում հետազոտում՝ իրենց բնորոշ բոլոր առանձնահատկություններով հանդերձ, և պատմահամեմատական մեթոդների կիրառմամբ:

Հետազոտության առարկան, ժամանակագրական շրջանակը, ուսումնասիրվածության աստիճանը: Հետազոտության **առարկան** հանդիսանում է «Հայոց եկեղեցին Հայրենական մեծ պատերազմի և հետպատերազմյան տարիներին՝ մինչև Ստալինի մահը»: **Հետազոտությունը** ընգրկում է 1940-1950-ական թթ. ընկած շրջանը: **Հետազոտության օբյեկտը** ուսումնական հաստատություններում պատմության դասավանդման արդյունավետության բարձրացման գործընթաց է: Խորհրդային Հայաստանում տեղի ունեցած բռնաճնշումների ժամանակաշրջանի վերաբերյալ **հետազոտությունները այդքան էլ շատ չեն**: Հարցին անդրադարձել են հիմնականում խորհրդային շրջանի ուսումնասիրողները՝ մասնակիորեն ու կողմնակալ ձևով: Հետազոտական աշխատանքի շրջանակներում հնարավոր չէ թեման ամբողջությամբ սպառել, ցանկալի է առավել խորը և մանրակրկիտ ուսումնասիրությունների կատարումը:

Հետազոտության կառուցվածքը: Բաղկացած է ներածությունից, 4 գլուխներից, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՄԻՆՉԵՎ Ի. ՍՏԱԼԻՆԻ ՄԱՀԸ. ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

1941թ. հունիսի 22-ին սկսվեց Հայրենական մեծ պատերազմը: Խորհրդային միությունը կարողացավ կասեցնել գերմանական ֆաշիզմի ձգտումը դեպի համաշխարհային տիրապետություն և որոշիչ դեր խաղալ հիտլերյան Գերմանիայի ջախջախման հարցում: Հայ ժողովուրդը ևս մասնակցություն ունեցավ՝ անմասն չմնաց նաև Հայոց եկեղեցին, և այդ ծանր տարիներին իր ծառայությունը մատուցեց, հույս ունենալով փրկել հայրենիքը: Խորհրդային իշխանությունները եկեղեցին անջատել էին պետությունից և արգելել եկեղեցուն միջամտել պետական գործերին, սակայն պատերազմի առաջին օրը Ռուս ուղղափառ եկեղեցու պատրիարքական տեղապահ մետրոպոլիտ Սերգին կոչով դիմեց քրիստոնյա թեմերին. **«Ֆաշիստ ավազակները հարձակվել են մեր հայրենիքի վրա, ոտնահարելով ամեն տեսակի պայմանագրերն ու խոստումները, նրանք հանկարծակի հարձակվեցին մեզ վրա, և ահա խաղաղ քրիստոնյաների արյունը հեղվում է հարազատ հողին...»: Քրիստոնյա եկեղեցին օրհնում է իր բոլոր հավատացյալներին՝ հանուն Հայրենիքի սրբազան սահմանների պաշտպանության. «Աստված մեզ հաղթանակ ընծայի»:**[1] 1941թ. հուլիսի 5-ին աշխարհի հայ հավատացյալներին դիմեց նաև Ամենայն Հայոց Կաթողիկոսի Ազգընտիր տեղապահը, ում կոչին արձագանքեցին Հայաստանի և սփյուռքի հայ համայնքները: Հայոց եկեղեցին կրկին կանգնեց ժողովրդի կողքին և հայրենանվեր գործունեություն ծավալեց: Ֆաշիզմի տապալման գործն արագացնելու նպատակով Գ. Չորեքչյանը վճռեց միջոցներ հայթայթել **«Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն** ստեղծելու համար: Նա այդ մասին հայնեց կենտրոնական մարմիններին և 1943թ. հունվարին **Կաթողիկոսությունը «Սասունցի Դավիթ»-ի ֆոնդին** փոխանցեց 800.000₽ արժողությամբ թանկարժեք նվերներ, զարդեր, ադամանդներով զարդարված թանկարժեք պանակե, պլատինից ու ադամանդապատ այլ իրեր, 1000£ և 50.000₽: Աշխարհի հավատացյալ հայերին հորդորեց մասնակցել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծմանը: ***«Սովետական բոլոր ժողովուրդներն էլ տոգորված են մի ցանկությամբ՝ ամեն միջոցներով օգնել Կարմիր բանակին՝ ապահովելու համար հայրենական պատերազմի***

[1] Собеседник, 1990 г., N 16:

հաղթական վախճանը.... վայելելով ազատություն, խաղաղություն և բարօր կյանք».[2] *ԽՍՀՄ* պետբանկում հատուկ հաշիվ բացելու համար խդրում է կարգադրություն։[3]

Պատերազմի տարիներին եկեղեցին կիսում էր բոլոր դժվարությունները, միևնույն ժամանակ մեծ ներդրում ունենալով նյութական և բարոյական առումով հաղթանակի կերտման հարցում։[4] Իրադրությունը բավականին ծանր էր և Ստալինը գիտակցում էր, որ արտասահմանում հայոց եկեղեցու մեծ դերը ունի։ Իր վարած քաղաքականությամբ նա ցանկանում էր ցույց տալ, որ ԽՍՀՄ-ում արդեն վերացել է անհանդուրժողականությունը եկեղեցու նկատմամաբ, եկեղեցուն ևս լայն հնարավորություններ են տրվել՝ զբաղվելու թե՛ հասարակական և թե՛ բարեգործական աշխատանքներով։ Հակահիտլերյան պայքարում դաշնակցելով ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի հետ, նա ձգտում էր հանդուրժողականություն ցուցաբերել կրոնի նկատմամբ, որպեսզի ԽՍՀՄ-ին համաշխարհային քաղաքականությունը չընկալի որպես թշնամի։ 1943թ. հունվարի 26-ին Ստալինի ստորագրությամբ Մոսկվայից Էջմիածին է ուղարկվում հեռագիր. ***«Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին. Խնդրում եմ իմ ողջույնը և Կարմիր բանակի շնորհակալությունը հայտնել հավատացյալ հայերին ու Էջմիածնի կաթողիկոսարանի հոգևորականությանը, որ միջոցներ են մուծել «Սասունցի Դավիթ» տանկային շարասյուն կառուցելու համար։ ԽՍՀՄ պետբանկում հատուկ հաշիվ բանալու համար ցուցում է տրված։ Իոսիֆ Ստալին».***[5]

Կազմակերպվում է բարեգործական հանգանակություն՝ Արգենտինայի, Սպահանի, Ջուղայի հայերի, Հարավային Ամերիկայի, Կիպրոսի, Հորդանանի, Սիրիայի, Լիբանանի, Իրաքի, Եթովպիայի և այլ երկրների համայնքների մասնակցությամբ։ Խորհրդային հայրենիքի պաշտպանությունը սրբազան գործ էր։ Պատահական չէր միտրոպոլիտ Սերգիի և Չորեքչյանի գործուն մասնակցությունը՝ ռազմաճակատին նյութական աջակցության գործում։ Շրջափակված տարածքներում հոգևորականները հանդիսանում էին կապող օղակ պրտիզանների և տեղական բնակչության միջև։ Բազմաթիվ հոգևորականներ պետք է արժանանային **«Հայրենական պատերազմի պարտիզան»** շքանշանին։[6] Խորհրդային իշխանության վերաբերմունքը ոգևորում է հայ հավատացյալներին և նրանք դիմում են Ազգընտիր տեղապահին՝ իրենց եկեղեցիները վերաբացելու համար, որը նման ժամանակի

---

[2] ՀԱԱ, Ֆ. 409, ց. 1, գ. 281, թ 1-8։
[3] Ս. Բեհբուդյան, նշվ. աշխ., Գիրք Զ, էջ 179։
[4] Գ. Մկրտչյան, Պետություն-եկեղեցի հարաբերությունները Խորհրդային հայաստանում, ԵՊՀ, էջ 92։
[5] «Էջմիածին», 1944, N 1, էջ 5։
[6] Василева О. Русская православная церков в политике советского государства в 1943-1948 гг., Москва, 1999. с. 74.

համար համարձակ քայլ էր և Ազգընտիր տեղապահը չէր կարող եկեղեցիները բացել։ Եկեղեցու բարեգործությունը չսահմանափակվեց «Սասունցի Դավիթ» շարասյան ստեղծմամբ։ 1943թ. հունվարից-1944թ. օգոստոս ԱՄՆ-ում գնվել և Կարմիր բանակին է ուղարկվել 87.000$ արժողության դեղորայք և 50.000$ գումար։ Օգնությունները ուղարկվել են Ռուսաստանի Օգնության Կոմիտեի միջոցով։ Նվիրատվություններին իրենց մասնակցությունն էին ունենում նաև Խորհրդային Միությունում բնակվող հայ հավատացյալները։[7] Փոխվել էր Խորհրդային իշխանության դիրքորոշումը եկեղեցու նկատմամբ և Ռուսիո պատրիարք Տիրխոնի մահվանից հետո՝ 1925թ-ից ի վեր, 1943թ. առաջին անգամ թույլատրվեց եկեղեցական ժողով անցկացնել և պատրիարքի ընտրել։ Ռուս Ուղղափառ եկեղեցու առաջնորդ դարձավ պատրիառքական տեղապահ **Սերգին**։ Ստալինը հոկտեմբերի 29-ի որոշում է ՀԽՍՀ ժողկոմխորհին կից Հայ առաքելական եկեղեցու գործերի խորհուրդ ստեղծել։ 1943թ. ՀԿ/բ/Կ կենտկոմի նոյեմբերի որոշմամբ կենտկոմի նախագահ է նշնակվում **Սուրեն Հովհաննիսյանը**։

Ազգընտիր տեղապահի ջանքերով 1944թ. հրատարակվում է «Էջմիածին» ամսագիրը։ Դեռ 1913թ. ամսագրի վերաբացման համար Գևորգ Զ-ն նախագիծ էր ներկայացրել, նպատակ ունենալով լուսաբանել Էջմիածնի կաթողիկոսության առօրյան ու գործունեությունը, նպաստել հայագիտության ոլորտում գիտահետազոտական թեմաների մշակմանը և պատերազմի պայմաններում ԽՍՀՄ-ին համակրող սփյուռքահայ գաղութների համախմբմանը։[8] Ուշագրավ է նաև Ավ. Իսահակյանի հարցազրույցը Ազգընտիր տեղապահ Չորեքչյանի հետ՝ պատերազմի և եկեղեցական հարցերի վերաբերյալ, որտեղ Ազգընտիրը մանրամասնում է կատարված գործերի մասին։[9] 1944թ. փետրվարի 29-ին տանկային գվարդիական զորամասին հանձնվեց «Սասունցի Դավիթ» տանկային շարասյունը։[10] «Տ-34» մակնիշի 21 տանկ մտավ 119 առանձին տանկային գնդի փոխգնդապետ Վոյնովսկու հրամանատարության տակ։ Տանկերի աշտարակներին գրված էր՝ **«Սասունցի Դավիթ»։** 1944թ. մայիսի վերջին ավարտվում է տաանկային 2-րդ շարասյան կազմավորումը՝ բաղկացած 22 տանկից։ Մարտական գործողությունների համար հուլիսի 23-ին տանկային շարասյունը պարգևատրվում է մարտկան կարմիր դրոշի շքանշանով, հաջորդ տարի

[7] Ստ. Ստեփանյանց, նշվ. աշխ., էջ 145։
[8] Ս. Բեհբուդյան, նշվ. աշխ., Գիրք Զ, էջ 205։
[9] ՀԱԱ, Ֆ. 409, ց. 1. գ. 291, թ. 1-4։
[10] «Էջմիածին», 1944թ, N 2-3, էջ 3։

գունդը, որի կազմում էր նաև շարասյունը, արժանանում է գվարդիական կոչման: Կարծես թե սկսում էր հալչել այն **«սառցե պատնեշը»,** որ բաժանում էր եկեղեցուն պետությունից: Չորեքչյանը օգտվելով ընձեռված հնարավորությունից 1944թ. փետրվարի 12-ին վերաբացում է Վրաստանի հայոց թեմը՝ **Սահակ ավագ քին. Սահակյանին առաջնորդությամբ**: Նկատելիորեն բարձրացել էր Էջմիածնի հեղինակությունը պատերազմի տարիներին: Սա է վկայում այն, որ 1945թ. փետրվարի 13-ին **Գ. Հարությունյանը** խնդրագիր է ուղարկում Մոսկվա՝ Էջմիածնի շրջան անվանումը վերականգնելու և Վաղարշապատը էջմիածին կոչելու համար: Խնդրանքը անարձագանք չի մնում: 1945թ. ապրիլին **կաթողիկոսական տեղապահ Չորեքչյանը** մեկնում է Մոսկվա: Նրան Մոսկվայում դիմավորում է Բերիան և հայտնում, որ տեսակցելու է Ստալինին, նախապատրաստվի այդ տեսակցությանը: Ազգընտիր տեղապահը ապրիլի 5-ին զեկուցագիր է կազմում, որտեղ ներկայացված էին պահանջներ և խնդրանքներ. **«Սբ. Էջմիածինը վերականգնելու համար ես անհրաժեշտ կհամարեի նրան և Գերագույն Պատրիարքին-Ամենայն Հայոց կաթողիկոսին ընձեռել հետևյալ իրավունքներն ու արտոնությունները, որոնք կապահովեին նրա մեծ թափի աշխատանքը հօգուտ եկեղեցու և հայրենիքի շահերի.**

1. Վերականգնել Սբ. Էջմիածնի հոգևոր ճեմարանը՝ ուսուցման 6-ամյա ժամկետով, որը կունենա 3 դասարան՝ միջնակարգ դպրոցի ծրագրով քահանաներ պատրաստելու համար և 3 դասընթաց՝ բարձրագույն դպրոցի ծրագրով սնազգեստ հոգևորականության կադրեր պատրաստելու համար, նպատակ ունենալով բավարարել հավատացյալ հայերի կարիքները ԽՍՀՄ-ում և արտասահմանում:

2. Սբ. Էջմիածնին վերադարձնել նախկին հոգևոր ճեմարանի գրադարանը, որն այնքան անհրաժեշտ է նոր բացվող հոգևոր ճեմարանին: Ներկայումս այդ գրադարանը գտնվում է Մատենադարանում և չի օգտագործվում:

3. Թույլ տալ Սբ. Էջմիածնին ունենալ իր տպարանը՝ հոգևոր ճեմարանի դասագրքերը, եկեղեցական գրքերը, Կաթողիկոսի կոնդակները, «Էջմիածին» ժուռնալը և եկեղեցական օրացույցը տպագրելու համար:

4. Թույլ տալ «Էջմիածին» ժուռնալին հատուկ բաժնում տպագրել գիտահետազոտական հոդվածներ հայագիտական հարցերի ուսումնասիրության բնագավառից, որովհետև առանց դրա ժուռնալը արտասահմանում հաջողություն չի ունենա և չի կարող իրագործել իր հիմնական դերը, այն է ամրապնդել արտասահմանում բնակվող հայերի կապը Խորհրդային Հայաստանի հետ:

5. Որոշել Սբ. Էջմիածնի վանքի սահմանները՝ տալով նրան իսկական վանքի կերպարանք: Ներկայումս վանքապատկան շենքերը զբաղեցնում են զորամասերն ու Խորհրդային-կուսակցական հիմնարկությունների աշխատողները:

6. Սբ. Էջմիածնին վերադարձնել «Հռիփսիմէ», «Գեղարդ» և «Խոր Վիրապ» վանքերը..

7. Թույլ տալ Սբ. Էջմիածնին նորից կառուցել «Զվարթնոց» վանքը՝ ըստ ճարտարապետ Թ. Թորամանյանի մոդելի:

8. Թույլ տալ կաթողիկոսի միջնորդությամբ անհրաժեշտության դեպքում խորհրդային Հայաստան գալ արտասահմանյան հոգևորականների՝ եպիսկոպոս ձեռնադրելու համար, ինչպես նաև եկեղեցական գործերի համար արտասահման մեկնել Սբ. Էջմիածնի նշանակած թեմականերին և Սբ. Էջմիածնի պատգամավորներին:

9. Թույլ տալ Սբ. Էջմիածնին առաջիկա Մյուռոնօրհնության կապակցությամբ 1946 թ. արտասահմանից հրավիրել եպիսկոպոսների ու թեմակալների և վերջիններիս միջոցով կազմակերպել հայ ականավոր

հարուստների ժամանումը, որպես ուխտավորների, նպատակ ունենալով նրանցից ստանալ դրամական խոշոր միջոցներ՝ Սբ. Էջմիածնի Խորհրդային Հայաստանի շինարարական կարիքների համար:
10. Թույլ տալ Պետրանկի Երևանի բաժանմունքում բացել Սբ. Էջմիածնի հատուկ օտարերկրյա վալիոտային /արժութային/ հաշիվ և այնտեղ կենտրոնացնել Սբ. Էջմիածնի անվամբ արտասահմանյան թեմերից ստացվող դրամական միջոցները:
11. Թույլ տալ Գերագույն պատրիարքին-Ամենայն Հայոց կաթողիկոսին, վանքի ու վեհարանի կարիքների համար արտասահմանից ստանալ ավտոմեքենաներ, գրամեքենաներ, թուղթ ևն, ինչպես նաև ծանրոցներ՝ Էջմիածնի միաբանության կարիքների համար:

Օգտվելով այդ հեղինակությունից՝ Սբ. Էջմիածնի նկատմամբ արտասահմանյան հայերի ունեցած սիրուց ու նվիրվածությունից, ամենայն Հայոց կաթողիկոսը կկարողանա ղեկավարել հայ ժողովրդի ազգային շահերը և տալ նրան մեր Խորհրդային Հայրենիքի համար ցանկալի ուղղություն»:[11]

1945թ. ապրիլի 19-ին Ստալինը բարեհաճությամբ ընդունեց Չորեքչյանին, բարձր գնահատելով վերջինիս հայրենասիրական գործունեությունը՝ պատերազմի սկզբից: Նա համաձայնեց լուծել զեկուցագրում առաջ քաշված բոլոր խնդիրները, բացի Էջմիածնապատկան կալվածքների հարցից, քանի որ այդ հողատարածությունները կոլտնտեսություններին էին պատկանում և նա հողօգտագործմա համակարգին ձեռք չէր տա: Չորեքչյանի խնդրանքով վերոնշյալ զեկուցագրի առաջին էջի վերին ձախ անկյունում Ստալինը մակագրում է.*«Համաձայն եմ: ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների նախագահ Ի. Ստալին, 19.4.45թ.»:*[12]

Բանակին մատուցած ծառայությունների համար Չորեքչյանը արժանանում է **«Կովկասի պաշտպանության համար» շքանշանի**: Ապրիլի 30-ին վերադառնում է Հայաստան և **Ավ. Իսահակյանի** տանը հանդիպում է կայանում, որին ներկա էին **Մ. Սարյանը, Աշոտ Գրաշին՝ տիկնոջ Մարգարիտ Աթաբեկյանի հետ, Նվարդ Թումանյանը և այլք**: Սրբազանը խոսում է Ստալինի հետ ունեցած զրույցից, որի ընթացքում խոսվել է կորուսյալ հայրենիքի մասին և Ստալինը խոստացել է հայերին վերաբնակեցնել Հյուսիսային Ղազախստանում: Խորհրդային Հայաստանի ղեկավարության հիմնական դիրքորոշումը վերոնշյալ հարցում հետևյալն էր. *«1. Օգտվելով այն հանգամանքից, որ երկրորդ աշխարհամարտի տարիներին Թուրքիան ակտիվորեն օժանդակել է Գերմանիային և նույնիսկ պատրաստվում էր պատերազմի մեջ մտնել նրա կողմից, բարձրացնել Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական հողերը Խորհրդային Հայաստանին վերադարձնելու հարցը: 2. Կազմակերպել աշխարհասփյուռ հայերի հայրենադարձությունը պատմական հայրենիք: 3. 1921թ. անարդարացիորեն Խորհրդային Ադրբեջանին անցած հայկական հողերի միացումը Խորհրդային Հայաստանին»:*[13]

---

[11] ՀԱԱ, Ֆ. 409, ց.1, գ.743, թ.2, թարգմանություն ռուսերենից:
[12] Ստ. Ստեփանյան, նշվ. աշխ., էջ 163:
[13] Ա. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 37:

Թուրքիան զավթողաբար էր տրամադրված ԽՍՀՄ-ի դեմ, իսկ Ստալինը ցանկանում էր պատժել Թուրքիային: Սակայն ֆաշիստական Գերմանիայի ջախջախումը հանգեցրեց նրան, որ 1944թ. օգոստոսի 2-ին Թուրքիան խզեց դիվանագիտական հարաբերությունները Գերմանիայի հետ և 1945թ. փետրվարի 28-ին պատերազմ հայտարարեց Գերմանիային ու Ճապոնիային: 1945 թ. մայիսի 9-ին ավարտվում է Հայրենական մեծ պատերազմը, դրա առթիվ Հայաստանի բոլոր եկեղեցիներում նույն օրը պատարագ է մատուցվում: 1945թ. մայիսից մինչև տարեվերջ Հայաստանում վերաբացվում են մի շարք եկեղեցիներ:[14]

ԳԼՈՒԽ 2. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ԳԵՎՈՐԳ Զ ՉՈՐԵՔՉՅԱՆ

1945թ. մայիսի 20-ին Երևանի Սբ. Սարգիս եկեղեցում գումարվում է ժողով: ***Սբ. Էջմիածնի ներկայացուցիչ Ռուբեն ծայրագույն վարդապետը*** ներկաներին ծանոթացնում է Էջմիածնում Հունիսի 16-ի Ազգային եկեղեցական ժողովի, պատգամավորական ընտրության և Մայր Աթոռի անելիքների մասին: Ժողովը հունիսի 16-ի համար պատգամավոր է ընտրում ***Ստեփան Մալխասյանին, Ավ. Իսահակյանին, Մ. Սարյանին և այլոց, ընդհանուր թվով 18 պատգամավոր:*** Գյումրիում ընտրվում է 14 պատգամավոր, իսկ Թբիլիսիում՝ վիրահայության կողմից, 15 պատգամավոր, այդ թվում նաև պատմաբան ***Իվան Ենիկոլոպյանը, գրողներ Սմբատ Դավլաթյանը, Գարեգին Սրվանձտյանը և Սահակ ավագ քհն. Սահակյանը:*** «Էջմիածին» ամսագիրը անդրադառնալնալով դեպքերին տպագրում է հոդված՝ Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյանին նվիրված: Հոդվածում հայ ժողովրդին կոչ է արվում Ազգընտիր տեղապահին ընտրել հայոց կաթողիկոս. ***«Սբ. Էջմիածնում միաբանության և հայ հավատացյալների ցանկություն և համոզմունքն է, որ առաջիկա համազգային ժողովը իր վրազմավաստակ ու հայրենասեր զավակի, ականավոր եկեղեցական Տեր Գևորգ սրբազան արքեպիսկոպոսին կվստահանա Ս. Գևորգ Լուսավորչի գահը՝ ընտրելով Ամենայն Հայոց կաթողիկոս».***[15] Սա Մոսկվայի ցանկությունն էր և պարբերականի միջոցով պատգամավորներին ու ողջ սփյուռքին իրազեկվում է միակ և հնարավոր թեկնածուի մասին: Էջմիածնի հոգևոր ճեմարանի շենքում տեղի է ունենում Ազգային ժողովի բացումը:[16] Բացման արարողությանը ներկա էին 102 պատգամավորներ՝ 28 հոգևորական, 74 աշխարհիկ ներկայացուցիչ: Մասնակցում էին պատգամավորներ Կալիֆոռնիայից, Եգիպտոսից, Անգլիայից, Բուլղարիայից, Թեհրանից,

---

[14] Աշտարակի շրջանի Հաղսու, Ներքին Ախտայի Փարուխ, Մաստարա գյուղերի, Քանաքեռի, Ստեփանավանի, Ախալքալաքի Գոման գյուղի, Նոր Բայազետի և Երևանի Սբ. Զորավոր եկեղեցիները:

[15] «Էջմիածին», 1945թ., N 5, էջ 7-11:

[16] Ա. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 41:

Իրանա-հնդկական թեմից, Վրաստանից, Բաքվից, Ֆրանսիայից, Պաղեստինից, Հյուսիսային Կովկասից, Շիրակի թեմից, Այրարատի թեմից, Ատրպատականի, Մեծի Տանն Կիլիկիո թեմերից, Ռումինիայից, Նոր Նախիջևանից: Հրավիրված էր նաև Քենտրբերյան տաճարի վանահայր Հյուլեթ Ջոնսոնը:[17] Ժողովի բացման նախօրյակին Ա. Իսահակյանը և Մ. Սարյանը հրաժարվում են մասնակցել ժողովին, քանի որ չգիտեին ինչ պատասխանել սփյուռքահայ պատգամավորներին, երբ հարցնեն Թուրքահայաստանը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու մասին: Կառավարության անդամի պնդումներից հետո նրանք ևս մասնակցեցին:[18] Հունիսի 25-ի նիստի ***ընթացքում նորընտիր կաթողիկոսը հեռագրեց Իոսիֆ Ստալինին՝*** հայտնելով երախտագիտությունը ժողովի բացման և կաթողիկոսական ընտրություն անցկացնելու համար:[19] Ֆրանսահայ պատվիրակությունը Ստալինին փոխանցելու համար բերել էր նվեր՝ մարոկոյական հնագույն սուր, հույս ունենալով, որ վերջինիս շնորհիվ պատուհան կբացվի դեպի հայոց հողեր: ՀԽՍՀ ԺԿԽ-ի կազմակերպած ընդունելության ժամանակ արտասահմանյան պատվիրակները լիահույս էին, որ խորհրդային կառավարությունը կիրագործի Հայաստանի տարածքների միավորման երազանքը:[20] 1945թ. հունիսի 24-ին Ի. Պոլյանսկին կաթողիկոսին ԽՍՀՄ կառավարության անունից հանձնում է **«Ջիս -101»** մակնիշի ավտոմեքենա, որը կաթողիկոսի առաջին մեքենան չէր:[21] ***«Ժողովուրդների հայրը և իմաստուն առաջնորդը»***[22] բարձր գնահատեց նաև ***Ջոնսոնի*** մատուցած ծառայությունը: 1945թ. հուլիսի 6-ին Ստալինը նրան ընդունեց Կրեմլում և զրույցի ժամանակ, որին ներկա էր ԱԳ ժողկոմ Վ. Մոլոտովը, Ջոնսոնը պատմում է Էջմիածնի եկեղեցական ժողովի մասին:[23] Ստալինը Ջոնսոնին արժանացնում է ***«Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանի»:*** Չորեքչյանի կաթողիկոս ընտրվելը ոգեշնչում է նաև Մայր Աթոռին և ողջ հայությանը: Ստալինը թույլատրում է արտասահմանի հայությանը վերադառնալ Հայրենիք: Նա ցանկանում էր վերջիններիս օգնությամբ Թուրքիայից անջատել և Խորհրդային Միությանը միացնել անցյալում Հայաստանին պատկանող արևմտյան հողերը: 1945թ. հունիսի 30-ին ՀԿ/բ/Կ կենտկոմի բյուրոն հաստատում է ժողկոմխորհի ներկայացուցիչներին, որոնք պետք է մեկնեին Իրան,

[17] «Հայկական հարցի» խոսնակը միջազգային ֆորումներում:
[18] Ա. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 41:
[19] Ս. Բեհբուդյան, նշվ. աշխ., գիրք Զ, էջ 290:
[20] Ա. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 41:
[21] Թեհրանցի բարեգործ Ռոման նրան նվիրել էր ամերիկյան շքեղ «Լինքոլն»:
[22] Այդպես էին անվանում Ստալինին:
[23] «Խորհրդային Հայաստան», 1945, 7 հուլիսի:

Ռումինիա, Բուլղարիա, Սիրիա և Լիբանան՝ գաղթահայությանը հայրենիք վերադարձնելու առաքելությամբ: Միևնույն ժամանակ Թուրքիայի դեսպան ***Մելիմ Սարպերին*** հայտնում է խաղաղության պայմանագրի կնքման մասին: ԽՍՀՄ ԱԳ ժողկոմ ***Վ. Մոլոտովը*** դեսպանին ի պատասխան, նշում է որ Խորհրդայիին միությունը տարածքային պահանջներ ունի Թուրքիայից՝ Արևելյան հողերը: Դա Թուրքիայի համար անսպասելի էր, 20-ականներին իրենց աջակից Ստալինը այժմ պահանջում էր Հայաստանի արևմտյան տարածքները և անգամ զորամիավորումներ տեղակայում խորհրդա-թուրքական սահմանի երկայնքով: 1945թ. Պոտսդամի համաժողովում դաշնակից երկրների ղեկավարները զարմանում են Ստալինի որոշումից, քանի որ նրան համարում էին հայերի ոխերիմ ախոյան: Հուլիսի 22-ին բրիտանական պատվիրակության ղեկավար ***Ու.Չերչիլը*** Ստալինին զգուշացրեց, որ չվախեցնի Թուրքիային, առաջ քաշելով տարածքային խնդիրներ: Թուրքիան առանց այն էլ շատ անհանգստացած է Բուլղարիայում բուլղարական և խորհրդային զորքերի կուտակումով:[24] Բրիտանիան հասկանում էր, որ հայկական հողերի հանձնումը բոլշևիկներին թույլ կտա ամրապնդվել Փոքր Ասիայում, այնտեղից թելադրելով իր պայմանները Թուրքիային և Իրանին: ***«Կարմիր գիշատիչը»*** կահաբեկի մի կողմից բրիտանական Հնդկաստանին, մյուս կողմից նավթով հարուստ Մերձավոր Արևելքին:[25] Ստալինը ելույթում նշում է. ***«Խոսքը մինչև առաջին համաշխարհային պատերազմը գոյություն ունեցող սահմանի վերականգման մասին է: Ես նկատի ունեմ Կարսի շրջանը, որը մինչ պատերազմը գտնվում էր Հայաստանի կազմում և Արդահանի շրջանը… Մենք գտնում ենք, որ սահմանը Կարսի և Արդահանի շրջանում ճիշտ չէ և մենք հայտարարել էինք Թուրքիային, որ եթե նա ուզում է մեզ հետ դաշինք կնքել, պետք է ուղղի այդ սահմանը, եթե նա չի ցանկանում ուղղել սահմանը, ապա բացառվում է դաշնագրի հարցը».***[26] Ելույթ է ունենում նաև ԱՄՆ-ի նախագահ ***Հ. Թրումանը,*** *նշելով.* ***«Ինչ վերաբերվում է տարածքային հարցին, ապա այն վերաբերում է միմիայն Խորհրդային Միությանը և Թուրքահային, և պետք է լուծվի իրար մեջ».***[27] Այս անգամ ևս Հայկական Հարցը լուծվում էր առանց հայերի և որևէ դրական արդյունք չարձանագրվեց:

Գևորգ Զ-ն իր գերծունեությունը սկսեց հայ եկեղեցու ամրապնդումից և եպիսկոպոսական աստիճան շնորհեց սփյուռքում և Հայաստանում բնակվող մի շարք

[24] Ա. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 43:
[25] Ստ. Ստեփանյանց, նշվ. աշխ., էջ 177:
[26] Ա. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 43:
[27] Նույն տեղում, էջ 44:

հոգևորականների։ Հայկական հողերի վերադարձը ոգևորել էր ողջ հայությանը։ Կաթողիկոսին հեռագրեր էին հղում ինչպես սփյուռքից, այնպես էլ Հայաստանի տարբեր շրջաններից։ 1945թ. հոկտեմբերի 25-ին Գևորգ Զ-ն հայրապետական կոնդակով դիմեց ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարություններին. ***«Ձեզ ենք դիմում Թուրքիայից վտարված հին ու նոր հայ զաղթականները, ովքեր թափառում են երկրագնդի զանազան մասերում և նրանց հետ Ամենայն հինավուրց Հայրապետությունը ևս խնդրում է ճանաչել հայերի իրավունքը իրենց պատմական Հայրենիքի վրա, որ նրանք սրբագործել են իրենց արյունով և քրտինքով և ծածկել հիշատակի արժանի մշակութային կոթողներով։ Մենք խնդրում ենք առնել Թուրքիայի ձեռքից այդ բռնազավթված և այժմ համարյա ամայացված հողերը և վերադարձնել իրենց իսկական տերերին, միացնել Սովետական Հայաստանին, որով հնարավորություն կունենան խաղաղ ապրելու իրենց եղբայրակիցների կողքին՝ աշխատելու և իրենց ազգային մշակույթը զարգացնելու»։***[28] Հայոց հողերի վերադարձի խնդրով Ստալինը և Բերիան, վրաց պատմաբան ***Ս.Ջանաշիայի և Ն.Բերձենիշվիլու*** շուրթերով առաջ քաշեցին Թուրքիայից իրենց Արդահանի, Արդվինի, Օլթիի, Տորթումի, Իսպիրի, Բայբուրդի, Գյումունշահեն արևելյան Լազիստանի՝ ներառյալ Տրապիզոնի և Գերեսունի շրջանների վերադարձի հարցը։ Նման քայլով Ստալինը փորձում էր հասկացնել, որ պատերազմի դեպքում Թուրքիան հսկայական կորուստներ կունենա՝ դառնալով ավելի հնազանդ ու զիջող։ ԱՄՆ թեմի առաջնորդ ***Տիրան եպիսկոպոս Ներսոյանը*** նամակներ է հղում 3 մեծ տերություններին իսկ Վեհափառը ***Հարրի Թրումանին***՝ հարցի արդարացի լուծման համար։ Թուրքիայի նախագահ ***Ինոնյուն*** 1945թ. նոյեմբերի 1-ին Ազգային մեծ ժողովում հայտարարում է ***«Թուրքական հողերի ոչ մի մաս չի կարող պահանջվել որևէ մեկի կողմից»։***[29] 1945թ. նոյեմբերի 21-ին ԽՍՀՄ ժողկոմխորհը որոշում է թույլ տալ սփյուռքահայության զանգվածային հայրենադարձությունը։ Կազմավորվում է **հատուկ կոմիտե**, ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման հարցերով զբաղվելու համար։ Վեհափառը և Ստալինը կարծում էին, որ հայրենադարձված հայերը անցնելով Արաքսը վերջնականապես կհաստատվեն իրենց պապենական հողերում։ ԱՄՆ հայությունը ևս քայլեր էր ձեռնարկում հարցի լուծման համար։ Հայության շահերն էր պաշտպանում նաև Հարավսլավիայի մարշալ ***Բրոզ Տիտոն։*** 1946թ. փետրվարի 1-ին ՄԱԿ-ի ամերիկյան պատվիրակություն դիմում է ուղարկվում։ Պահանջը՝ ***Վ. Վիլսոնի*** որոշման համաձայն Հայաստանին վերադարձնել Թուրքիայի կողմից գրավված նահանգները։ Սփյուռքը նպատակին հասնելու համար փորձում է օգտագործել նաև քրիստոնեական

[28] ՀԱԱ, Ֆ. 409, ց.1, գ. 756, թ. 1-5։
[29] Ա. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 46։

եկեղեցին։ ԱՄՆ-ի 4 կազմակերպությունները՝ ***Ամերիկայի հայկական ազգային խորհուրդը, Հայերի պաշտպանության ամերիկյան կոմիտեն, Հյուսիսային Ամերիկայի հայ եկեղեցու բարձրագույն հոգևորականությունը և Ամերիկայի հայկական միսիոներների ասոցացիան*** հուշագրով դիմում են եկեղեցիների համաշխարհային խորհրդի Ժնևի նստաշրջանին։ Հայկական դատը պաշտպանելու համար ԱՄՆ-ում գործում է նաև ***National Etvayzor Qauncle*** կազմակերպությունը, որին ակտիվ մասնակցություն են ունենում ***կոնգրեսմեն Սելթը, Մեծ վիպասան Թեոդոր Դրայզերը*** և այլք։ Խորհրդային Միության բարեհաճ վերաբերմունքը կոտրել էր 1930-ականների մահասարսուռ սառույցը։ 1946թ. դրությամբ Հայաստանում գործում էր 14 եկեղեցի և վանք, ձեռնադրվում էին հոգևորականներ։ Վերանորոգվում է Գեղարդավանքը և վանահայր նշանակվում ***Եզնիկ վարդապետ Ազնավուրյանը***։[30] Հայ հավատացյալները դիմում են Մայր Աթոռին՝ ծխական եկեղեցիները բացելու համար. Թալինի շրջանի Գյոզլու գյուղի 23 հավատացյալներ խնդրում են վեհափառին բացել ծխական Սբ. Ստեփանոս եկեղեցին։[31] Դիմում նաև Երևանի Սպանդարյանի շրջանի 106 հավատացյալներ՝ խնդրելով բացել Սբ. Զորավար եկեղեցին։[32] Իշխանությունները անպատասխան էին թողնում խնդրագրերը՝ վախենում էին, որ ժողովուրդը «կկտրվեր» կոմունիզմի գաղափարներից։[33] Հայրապետի առջև ծառացել էր լուրջ խնդիր՝ ներգաղթյալ հայությանը ապահովել հարմարավետ պայմաններ։ 1946թ. կեսերին հայերի ներգաղթը ստանում է կազմակերպված բնույթ։ Հուլիսին ժամանում են առաջին գնացքները։ 1947թ. ապրիլի 30-ին ***Նյու Յորքի «Ոալդորֆ Աստորիա»*** հյուրանոցում բացվում է ***Հայկական համաշխարհային համագումարը***, որին մասնակցում էին 715 պատգամավորներ 22 երկրներից։ Խորհրդային իշխանությունը Հայաստանի պատվիրակությանը թույլ չի տալիս մասնակցել համագումարի աշխատանքներին։ Համագումարը բացում է ***Կալիֆորնիայի Հայոց առաջնորդական տեղապահ տեր Վարդան եպիսկոպոս Գասպարյանը։*** Ընթերցվում է Գևորգ Զ-ի հեռագիրը և 1947թ. ապրիլի 20-ի կոնդակը։ Համագումարում ամերիկյան սենատոր ***Չարլզ Ու Թոբին***, իր ելույթում ընգծում է հայերի մատուցած ծառայությունները երկու համաշխարհային պատերազմների ժամանակ, խոսում հայկական հարցի արդարացի լուծման պահանջից։[34] Համագումարը փակվում է մայիսի 4-ին, իսկ հունիսի 5-ին ***Տիրան***

---

[30] «Էջմիածին», 1946թ, N 4-5, էջ 17։
[31] ՀԱԱ, Ֆ. 409, ց. 1, գ. 2087, թ. 1։
[32] ՀԱԱ, Ֆ. 409, ց. 1, գ. 338, թ. 5։
[33] Ստ. Ստեփանյանց, նշվ. աշխ., էջ 183։
[34] Ա. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 71։

եպիսկոպոս Նեսոյանի գլխավորությամբ ՄԱԿ-ին հանձնվում է դիմում-խնդրագիրը: 1948-49թթ-ից խորհրդային վարչակարգը քիչ-քիչ փորձում էր վերադառնալ սարսափի և ահաբեկումների ժամանակաշարջան. քանդվում է Երևանի նորք թաղամասի Սբ. Աստվածածին եկեղեցին: Ա. Մանուկյանը նշում է, որ 1920-40-ական թթ. ընթացքում բանտարկվում և աքսորվում են հայ հոգևորականության մոտ 300 ներկայացուցիչներ, որոնցից 161-ը 1930-40-ական թթ., իսկ 1940-53թթ. դատապարտվում է 12 հոգևորական:[35]

ԳԼՈՒԽ 3. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՆՈՐ ԱՔՍՈՐԸ

1949թ. շարունակում են Ստալինյան դաժանությունները ինչպես մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովուրդի նկատմամբ: Հայրենադարձության ծրագրերը ձախողվել էին, 1949թ. հայրենադարձությունը դադարեցվել էր:[36] Ստալինի նպատակն էր հայերին բնակեցնել Ղազախստանում: 1949թ. հունիսի 14-ին հազարավոր հայեր տեղահանվում և ՆԳՆ զորքերի օգնությամբ, բեռնատար գնացքներով, առանց քննության ու դատի աքսորվում են Ալթայի երկրամաս: Պատճառաբանությունը նույնն էր՝ նրանք ***ազգայնամոլներ և խորհրդային կարգերի թշնամիներ են***: 1949թ. աքսորվում է 2754 ընտանիք՝ նաև հայրենադարձվածները: Ըստ ՀՀ ՆԳՆ արխիվային փաստաթղթերի, 1949թ. հունիսի 14-ին զանգվածային աքսորի ենթարկվածների մեջ հոգևորականներ չկային: Սակայն դա չէր նշանակում, որ Խորհրդային իշխանությունները փոխել են իրենց կրոնամերժ քաղաքականությունը:[37] Աքսորվածները չէին հասկանում, թե ինչու են աքսորվել և նրանց մեջ կային այնպիսիք, որոնք ուղղակիորեն մեղադրում էին կաթողիկոս Գևորգ Զ-ին, թե նա նպաստելով հայրենադարձությանը, դրանով նպաստել է հայրենադարձվածների աքսորին: 1949թ. հուլիսի 30-ին կաթողիկոսին նամակով դիմում է Ալթայի երկրամաս աքսորված հայրենադարձ մի աղջնակ՝ ***Միրուսենյան*** ազգանունով: Նա գրում է. ***«Միրելի Հայրիկ ջան, եթե այսպիսի բան կար, որ հայերին հայրենիքից վտարեն, ապա ինչու մյուս երկրներից հայերին հավաքեցիք, բերեցիք Հայրենիք... Թողնելով ամեն ունեցվածք, հիմա՝ ներկայումս շատ-շատերը կոտորվում են»:***[38] Լ. Ֆարմանյանի պնդմամբ, խոսելով Ղրիմի հայության բռնագաղթի պատճառների ու դրանց դասակարգման մասին, կարելի է եզրահանգել, որ հայությունը տվյալ պարագայում դարձել է գերմանացի զավթիչների հետ համագործակցության մեղադրանքի զոհ:[39] Նույն այս

[35] Ա. Մանուկյան, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-53թթ., էջ 129:
[36] Ա. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 79:
[37] Ա. Մանուկյան, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-53թթ., էջ 128:
[38] ՀԱԱ, Ֆ. 409, ց. 1, գ. 1110, թ. 2-10:
[39] Լ. Ֆարմանյան, Հայերի բռնի տեղաշարժերը ԽՍՀՄ-ում 1940-ական թթ., Հայոց պատմության հարցեր, էջ 314:

ժամանակահատվածում քանդվում է Երևանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին։ 1949թ. նախ գմբեթի խաչը կապելով ճոպանին և միացնելով բեռնատարին վայր գցեցին, հետո 2 ամիս շարունակ քանդեցին եկեղեցին։ Չկարողանալով մինչև վերջ հիմնահատակ ավերել եկեղեցին, պատի մեջ պայթուցիկ են լցնում և պատը փլուում։ Չնայած այս ամենին, հայ ժողովրդի մեջ նկատելի էր նաև հոգևոր զարթոնքը. Օրինակ Զատկի տոնը եկեղեցում վերածվել էր մեծ տոնակատարության, Երևանի եկեղեցիներ էին այցելում շուրջ 2-3000 տարբեր տարիքային խմբի հավատացյալներ։ Հայաստանի հոգևոր թեմերի հավատացյալները շարունակում էին պահանջել եկեղեցիների և աղոթատների բացում։ 1953թ. ՀԽՍՀ-ում հաշվվում էր հայ առաքելական մոտ 18 եկեղեցի։ 1953թ. մարտի 21-ի Գևորգ Զ-ի կոնդակը վկայում էր հետևյալը. ***«Գաղափարների ազատությունը բացարձակապես սեփական է Հայոց եկեղեցուն և հետևանք է նրա ժողովրդական կազմակերպությանը։ Ինչ է, որով հայերը չնայելով որ աշխարհի մեջ ցրված են, սակայն պահած են իրենց Դույրանը, միմյանց հետ կապված են լեզվով, ազգային եկեղեցով, ավանդույթներով ու սովորություններով։ Եկեղեցին ճանաչուած է տապանի փրկության, գրականության և այլն։ Ոչ ոք ցարդ չի համարձակվի մտածել խզել այն կապը, որ ազգը հաստատած է եկեղեցու հետ»։***[40]

1953թ. մարտի 5-ին վախճանվում է Ստալինը, դադարում է բաբախել ***«Լենինի գործի հանճարեղ շարունակողի, կոմունիստական կուսակցության և ողջ խորհրդային ժողովրդի առաջնորդի սիրտը»։***[41] 1953թ. մայիսի 30-ին Խորհրդային կառավարությունը հայտարարում է ***«բարիդրացիական հարաբերություններ պահպանելու և խաղաղություն ու անվտանգություն ամրապնդելու համար Հայաստանի և Վրաստանի կառավարությունները հնարավոր համարեցին հրաժարվել Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներից։ Այսպիսով, Խորհրդային միությունը Թուրքիայի նկատմամբ ոչ մի պահանջ չունի»։***[42]

1953թ. **Հայաստանի ԿԿ քարտուղար Ս. Թովմասյանը** ՀԽՍՀ մինիստրների խորհրդի նախագահ ***Ա. Քոչինյանը*** զեկուցում է ***Գ. Մալենկովին*** և ***Ն. Խրուշչովին*** Էջմիածնի կաթողիկոսության գործերի վերաբերյալ։ Նա գրում է, որ ***Էջմիածնի կաթողիկոսության հատկապես վերջին 15 տարիների գործունեությունը ցույց է տվել, որ այն սփյուռքահայ աշխատավոր զանգվածների վրա մեր ազդեցության տարածման կարևոր աղբյուրներից մեկն է, որովհետև եկեղեցական գործերի կառավարումից բացի, Էջմիածնի կաթողիկոսությունը սփյուռքահայության կյանքում բացառիկ դեր է խաղում...։***[43] 1954 թ. մայիսի 9-ին, ծանր հիվանդության պատճառով մահանում է Վեհափառը։

---

[40] ՀԱԱ, Ֆ. 409, ց. 1, գ. 489, թ. 25։
[41] Ա. Վիրաբյան, նշվ. աշխ., էջ 189։
[42] Նույն տեղում, էջ 62։
[43] Ս. Բեհբուդյան, նշվ. աշխ., Գիրք Զ, էջ 810։

Նա՝ հոգու և մահու կռիվ տալով ապրեց բավական բուռն կյանք, ջանաց պահպանել հայի ազգային դիմագիծը։ Վեհափառը ստիպված էր շատ ժամանակ նվիրել աշխարհիկ գործունեությանը, հատկապես քաղաքական խնդիրներին։

Ավարտվեց մեծ բռնապետ Ստալինի ժամանակաշրջանը, իր ետևում թողնելով խեղված ճակատագրեր և խոնարհված եկեղեցիներ, անաստվածության քարոզարշավ։ 1920-53թթ. կարելի է բնութագրել որպես հայոց եկեղեցու անկման և վերելքի, հոգևոր արժեքների իրավազրկման և գոյապահպանման, հաջողությունների և փորձառությունների ժամանակաշրջան։ Սկսվեց խրուշչովյան ձնհալը, սակայն չավարտվեց հակաեկեղեցական պայքարը։

ԳԼՈՒԽ 4. ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայոց պատմությունը բացառիկ է ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային պատմության համատեքստում։ Ապրելով տարբեր իրականությունների, կայսրությունների ու մշակույթների հաղորդակցության սահմանում՝ հայ ժողովրդի պատմությունն ունեցել է քաղաքակրթական վերելքներով ու դրամատիզմով լի ընթացք։ Հայոց պատմության դասավանդման գործընթացի նպատակն է ազգային ինքնագիտակցության ձևավորումը, պատմական անցյալի հետ ծանոթացումը, անցյալի փորձի հիման վրա՝ ներկայի ճիշտ ուղու կառուցումը, ժամանակակից աշխարհում տեղի ունեցող իրադարձությունների ճիշտ գնահատումը, զարգացած աշխարհայացք ունեցող անհատի դաստիարակումը, որը օժտված կլինի հայրենասիրությամբ և համամարդկային արժեքներով։ Թեմայի դասավանդման արդյունավետությունը ամրապնդելու համար կարևոր է այնպիսի մեթոդական պլանի մշակում, որը հետաքրքրություն կառաջացնի աշակերտների մոտ՝ դասին ամբողջովին ներգրավվելու համար։ Նախապես ուսումնասիրելով մեթոդական գրականություն, պետք է կազմել անհրաժեշտ պլան, որով պետք է հասնել առավելագույն արդյունքի։ Պատմության արդյունավետ դասավանդման միջոցներն են արդի մեթոդների և տեխնոլոգիաների կիրառումը, որով գործընթացը առավել բովանդակալից է դառնում՝ հագեցած տեղեկատվության հնարավորինս տարբեր ու բազմազան աղբյուրներով։ Սովորողները ձեռք են բերում սեփական մտածողությունը խթանող ճանաչողական կշռադատման նյութեր և փաստերի ու փաստարկների ինքնուրույն որոնման միջոցով փորձում են հաստատել կամ ժխտել այս կամ այն գաղափարն ու տեսակետը և ձևավորվում է պատմական բազմատեսանկյուն մտածողությունը։ Թեմայի դասավանդման համար,

որպես թիրախային խումբ կարելի է ընտրել 9-րդ և 12-րդ դասարանները: Դասավանդումից առաջ, նախ անհրաժեշտ է որոշել դասավանդման նպատակը, որն էլ կլինի ***«դասի գլխավոր բովանդակության յուրացումն ու հիմնական աշխարհայացքային գաղափարը»***.[44] Առանձնացվում են դասի կրթական, դաստիարակչական և զարգացնող նպտակները: Ինչպես յուրաքանչյուր նյութ, այնպես էլ «Հայոց եկեղեցի Հայրենական պատերազմի և հետպատերազմյան տարիներին՝ մինչև Ստալինի մահը» թեմայի դեպքում անհրաժեշտ է պահպանել եռաստիճան համակարգը՝ սովորեցնել, դաստիարակել, զարգացնել: Այս թեման նպատակահարմար է դասավանդել արդի մեթոդների և տեխնոլոգիաների կիրառությամբ՝ ձևավորելով սովորողների մոտ բազմատեսանկյուն մտածողություն: Պատմության դասավանդման գործընթացում սովորողները պետք է նախապատրաստվեն ապրելու այնպիսի աշխարհում, որը բնութագրվում է էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական բազմազանությամբ: Թեմայի դասավանդման արդյունավետության համար տեղին է նշել բազմատեսանկյուն մտածողության ձևավորման և շարունակական զարգացման գաղափարի առաջատար պաշտպաններից Գիտա Ստայներ-Խամսի խոսքերը. ***«….հասարակական համերաշխությունը, խաղաղությունը և ժողովրդականությունը ենթադրում են անցյալի, ներկայի և ապագայի ընդհանուր տեսլական»***.[45]

Քանի որ հետազոտության թեման բավականին ծավալուն է և տվյալ պատմական ժամանակաշրջանը նշանակալից ու շրջադարձային էր նաև հայ ժողովրդի համար, ուստի անհրաժեշտ է այն ներկայացնել ու ուսուցանել առավել մանրամասն: Թեման «մատուցելիս» դասավանդողի նպատակն է ներկայացնել նախ ուսումնասիրվող տվյալ ժամանակաշրջանի հիմնական խնդիրների ամբողջական բնութագիրը: Ուսուցման նման մոտեցումը մեծ աշխատանք է պահանջում: Ուսուցանողը պետք է հետևողականորեն վերլուծաբար ներկայացնի նյութը՝ ելնելով ամբողջական բնութագրման տրամաբանությունից: Նոր նյութի հաղորդումը իր հերթին նպաստում է սովորողների երևակայության, հիշողության, մտային կարողությունների զարգացմանը: Այն պետք է լինի գիտական, սովորեցնի մտածել, կատարել վերլուծություններ, եզրակացություններ, դասագրքի շրջանակներից դուրս ծանոթանալ որևէ այլ թեմայի հետ: Միաժամանակ կարելի է նաև կիրառել զրույցի, հարց ու պատասխանի, նկարների, քարտեզների հետ աշխատելու մեթոդներն ու հնարները:

---

[44] Հ. Պապոյան, Պատմության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2013, էջ 197:

[45] Ա. Եփրիկյան, Պատմության դասավանդման արդի մեթոդներ և տեխնոլոգիաներ, երևան 2021, էջ 231:

12-րդ դասարանում, Հայոց պատմության դասընթացի շրջանակներում «Հայոց եկեղեցին Հայրենական մեծ պատերազմի և հետպատերազմյան տարիներին՝ մինչև Ստալինի մահը» թեմայի դասավանման համար կարելի է ընտրել խառը համակցված դասի տիպը: ***Իրականացվելիք դասի նպատակը կլինի***-1. *Ներկայացնել Խորհրդային վարչակարգերի ծավալած հակաեկեղեցական պայքարը, պատճառներն ու խնդիրները, Հայոց եկեղեցու գոյապայքարը՝ ընդդեմ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման, եկեղեցիների փակման և այլնի վերաբերյալ, Երկրորդ աշխարհամարտի տարիներին Գևորգ Զ Չորեքչյանին թույլատրելի բարենորոգումները և հայրենադարձությունը: 2.Նպաստել սովորողների պատմական մտածողության, աշխարհայացքի ընդլայմանը: Զարգացնել սովորողների պատմահամեմատական, վերլուծական հմտությունները: 3. Նպաստել սովորողների ազգային ինքնագիտակցության ձևավորմանը և հայրենասիրական դաստիարակությանը, պատմությունից առավել խորքային գիտելիքներ ձեռք բերելուն:*

Կիրառվող մեթոդներն ու հնարները- Զրույց, հարց ու պատասխան, քննարկում, քարտեզ, փաստաթղթերի ուսումնասիրում, վավերագրական տեսաֆիլմի դիտում[46]

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայ եկեղեցու և հայ ժողովրդի պատմությունը անբաժանելիորեն խարսխված են միմյանց, եկեղեցին հայության հետ միասին քայլել է պատմության քառուղիներում՝ ապրելով և վերելքի և վայրեջքի, հաջողությունների ու անհաջողությունների ժամանակաշրջան: 20-րդ դարի սկիզբը լի էր տարաբնույթ փորձություններով և դա չարաբաստիկ էր նաև Հայոց եկեղեցու համար: Հայրենական պատերազմի և դրան հաջորդած ժամանակաշրջանը ևս ճգնաժամային էր Հայոց եկեղեցու համար: Սույն հետազոտությունը հնարավորություն ընձեռեց նորովի հետազոտել այս ժամանակաշրջանի առանձնահատկությունները:

Չնայած նրան, որ խորհրդային վարչակարգը 1940-ական թթ. սկզբներին առժամանակ թուլացնում է հակակրոնական քաղաքականությունը, հետագայում կրկին գրեթե նույն քաղաքականություն է որդեգրվում: Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայոց եկեղեցին, մի կողմ թողնելով խորհրդային վարչակարգից կրած տառապանքները և վեր դասելով ազգային շահը, իր բարոյական և նյութական աջակցությունն է ցուցաբերում Հայաստանին: Օգտվելով նպաստավոր պայմաններից՝ եկեղեցին դիմում է նաև գործնական քայլերի և Գևորգ Չորեքչյանի ջանքերով վերաբացվում են վանքեր և մի շարք հոգևոր կենտրոններ: Այնուամենայնիվ, 1940-ական թթ. վերջերին փոխվում է ԽՍՀՄ քաղաքականությունը հայ ժողովրդի և եկեղեցու նկատմամբ: Հայկական հարցը կրկին մնում

[46](https://uic.am/3800 (բռնաճնշումները Հայաստանում), Հասանելի է՝ 08.08.2022, 13:52: https://www.youtube.com/watch?v=3v2dWd95qi8 (Գևորգ Զ Չորեքչյան): Հասանելի է՝ 08.08.2022, 14:00:

է անլուծելի, ավերվում և քանդվում են բազմաթիվ եկեղեցիներ, 1949թ. հունիսի 14-ին սկսվում է հայության զանգվածային աքսորը դեպի Ալթայի երկրամաս: Եկեղեցին կրկին հայտնվում է մռայլ ու խառը ժամանակաշրջանում: Աքսորյալներից շատերը կարծում էին որ այդ ամենի մեղավորը հենց Գևորգ Զ Չորեքչյանն էր: Ի. Ստալինի մահով ավարտվում է բռնապետի որդեգրած քաղաքականության դարաշրջանը, իր ետևում թողնելով խեղված ճակատագրեր և խոնարհված բազմաթիվ եկեղեցիներ, անաստվածության քարոզարշավ:

Շատ կարևոր է նաև այն, որ այսօր ուսումնական հաստատություններում հնարավորինս մատչելի, հասկանալի և հասանելի ձևով դասավանդվի Հայրենական մեծ պատերազմի և դրան հաջորդած ժամանակաշրջանում Հայոց եկեղեցու ձեռնարկումների վերաբերյալ մանրամասներ, որը հնարավորություն կատ սովորողներին վեր հանել և ամբողջացնել մարդկության պատմությանը ուղեկցած քաղաքական ահաբեկչության օրինակներից հանդիսացող Ստալինյան բռնատիրական համակարգի դրսևորումները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Հայաստանի ազգային արխիվ

1. ՀԱԱ, Ֆ. 409, ց.1, գ.743:
2. ՀԱԱ, Ֆ. 409, ց.1, գ. 756:
3. ՀԱԱ, Ֆ. 409, ց. 1. գ. 291:
4. ՀԱԱ, Ֆ. 409, ց. 1, գ. 338:
5. ՀԱԱ, Ֆ. 409, ց. 1, գ. 281:
6. ՀԱԱ, Ֆ. 409, ց. 1, գ. 2087:
7. ՀԱԱ, Ֆ. 409, ց. 1, գ. 1110:
8. ՀԱԱ, Ֆ. 409, ց. 1, գ. 489:

Մամուլ

9. «Էջմիածին», 1944, N 1:
10. «Էջմիածին», 1944թ, N 2-3:
11. «Էջմիածին», 1945թ., N 5:
12. «Էջմիածին», 1946թ, N 4-5:
13. «Խորհրդային Հայաստան», 1945, 7 հուլիսի:

Ուսումնասիրություններ, մենագրություններ, հոդվածներ

14. Ա. Եփրիկյան, Պատմության դասավանդման արդի մեթոդներ և տեխնոլոգիաներ, Երևան 2021:
15. Ա. Մանուկյան, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-53թթ., Երևան, 1999:
16. Ա. Վիրաբյան, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով /1945-57թթ./, Երևան, 2001:
17. Գ. Մկրտչյան, Պետություն-եկեղեցի հարաբերությունները Խորհրդային հայաստանում, ԵՊՀ:
18. Լ. Ֆարմանյան, Հայերի բռնի տեղաշարժերը ԽՍՀՄ-ում 1940-ական թթ., Հայոց պատմության հարցեր:
19. Հ. Պապոյան, Պատմության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2013, էջ 197:
20. Ս. Բեհբուդյան, Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Զ, Երևան, 1999:
21. Ստ. Ստեփանյանց, Հայ Առաքելական եկեղեցին Ստալինյան բռնապետության օրոք, Երևան, 1994:

Օտարալեզու գրականություն

22. Собеседник, 1990 г., N 16:
23. Василева О. Русская православная церков в политике советского государства в 1943-1948 гг., Москва, 1999.